ԽԱՆԸՔ (մի տուն)։—30 տուն թ. Ղլիճ կեսուկի մէկ ժամ հարաւն, բնակավայր կամ օթեւան հոչակաւոր Տերիքու. վանքի միաբանաց, ուստի մէկ ժամ արեւմտեան հարաւ։

Այժմ Խանըքի շուրջն տեսնուած աւերակներն և գերեզմանատան ճեպորդներն ցոյց կտան թէ գիւղաքաղաք մի եղած լինելու է։ Գիւղս ունի ընդարձակ մարգագետիններ և սերմանելու արտեր, բազմաթիւ աղբիւրներ։

ՍԵՒՔ կամ ՍԵՒԸՔ։—25 տուն թ. Սևք (սևեր) և ըստ քրդաց խնձոր կը նշանակէ, 1 ½ ժամ արևելեան հարաւ Խանըքի։ Որպէս միւս գիւղերն՝ այս գիւղս ևս Կարսայ Կօլայից վերջին պատերազմից յետոյ գաղթող Թերեքեմայ Թուրքեր լաւ լաւ տներ շինած են։

ՍՈՒԷՐ։—30 տուն ք. բն. ըստ քրդաց Ձիաւոր կնշանակէ Սուէրն. 1 ժամ արևմտեան հարաւ Սևքի, 1 ¼ ժամ ի հարաւ Խանքի, 1 ½ ժամ արևելեան հարաւ Տերիքու։

ՄՕԼԼԱ-ՇԱՄՏԻՆ։—40 տուն թ. բն. 1 ½ ժամ արևմտեան հարաւ Խանըքայ։

ՏԷՐԸՔ (տէրեր) ըստ ք. եկեղեցի մի։—40 տուն թ. 1 ժամ արևմտեան հարաւ Խանըքու, կայ այս տեղ ամենագեղեցիկ վանք մի, որ դոմ դարձած է այս օր։ Արևելեան պատերազմէն առաջ կայր այստեղ միաբան և ունէր ընդարձակ գեղին, վանքի գիւղն և շրջականներն գտնուած Խանք, Սևք, Սուէր ևն. գիւղօրէից մէջ կը բնակուէին Եզոիք, որոց հսկողութեան յանձնած էր Բագրևանդայ առաջնորդն այս վանքը։ Եզոիք պահպանեցին միջոց մի և երբ 81—82 Թուա-